Մամուլի հաղորդագրություն

Ք. Եղեգնաձոր

30. 07.2015 թ.

ՀՀ ՎՁ մարզպետն ամփոփում է 2015թ. առաջին կիսամյակի գործունեության արդյունքները

Ներմարզային այցեր, ընդունելություններ, քննարկումներ

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը 2015 թվականին շարունակել է այցելությունները մարզի համայնքներ: Կրթական և առողջապահական հաստատությունների ղեկավարների հետ հանդիպումներում քննարկվել են ոլորտներում տիրող իրավիճակը, խնդիրների լուծման հնարավորությունները: Քննարկումներ են կազմակերպվել մարզի տարածքում խմելու և ոռոգման ջրի, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման և բնապահպանական այլ խնդիրների շուրջ: Այս ընթացքում մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի տարբեր համայնքների շուրջ 635 քաղաքացիներ:

[redacted]ոց ցեղասպանության 100-րդ տարելից

Հաշվետու ժամանակահատվածում Հ. Սարգսյանը 11.02.2015 թվականին մասնակցել է ՀՀ Նախագահի նստավայրում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների նախապատրաստական աշխատանքների ընթացքին նվիրված խորհրդակցությանը, իսկ ապրիլի 23-ին մասնակցել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարված Հայոց Ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությանը: Մարզպետի գլխավորությամբ մարզում պատշաճորեն կազմակերպվել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողովի կողմից նախատեսված ծրագրերը, այդ թվում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող խաչքարերի բացում մարզի մի շարք համայնքներում՝ Վայք, Ջերմուկ քաղաքային, Աղավնաձոր, Գետափ, Զեղեա, Մալիշկա, Ռինդ գյուղական համայնքներում, որոնց մեծ մասի բացման արարողություններին մարզպետ Հ. Սարգսյանը ներկա է եղել:

[redacted]աստանքային այցեր, հանդիպումներ

Հ. Սարգսյանը մասնակցել է նաև ՀՀ վարչապետի և ՀՀ ՏԿԱԻ նախարարի մոտ կազմակերպված ՀՀ մարզերին վերաբերող խնդիրներին նվիրված խորհրդակցություններին: Քննարկված հարցերի շուրջ խորհրդակցություն է անցկացրել մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարիների մասնակցությամբ և ներկայացրել քննարկվող հարցերի շրջանակները, տվել համապատասխան հանձնարարականներ: Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է մարզում իրականացվող հոգևոր, կրթական, մշակութային, մարզական միջոցառումներին և տոնական օրերի կապակցությամբ ուղերձներով շնորհավորել մարզի բնակիչներին:

ՀՀ ՏԿԱԻ նախարարի մասնակցությամբ անցկացվել է Վայոց ձորի մարզխորհրդի 2015 թվականի անդրանիկ նիստը, որտեղ, ի թիվս քննարկվող այլ հարցերի, տարեկան գործունեության հաշվետվությամբ հանդես են եկել մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների ղեկավարները:

2015 թվականի առաջին կիսամյակում կազմակերպվել է ՀՀ ՏԿԱԻ, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարների այցերը Վայոց ձորի մարզ:

Արտաքին հարաբերություններ

Մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հրավերով մասնակցել է դեսպանատներում իրականացված միջոցառումներին, ինչպես նաև հյուրընկալել է մարզ ժամանած օտարերկրյա դեսպանների:

Հունվարի 29-ից փետրվարի 2-ը հյուրընկալել է ՌԴ Արխանգելսկի նահանգի պատվիրակությանը՝ փոխնահանգապետ Ալեքսեյ Անդրոնովի գլխավորությամբ: Քննարկվել են ՌԴ Արխանգելսկի նահանգի և ՀՀ Վայոց ձորի մարզի միջև համագործակցության ներկա վիճակը, ստորագրված Համաձայնագրի կատարման ընթացքը, այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, փոխադարձ այցով ս/թ մայիսի 18-ից գտնվել է ՌԴ Նիժնի Նովգորոդի նահանգում: Այցի ընթացքում՝ մայիսի 19-ին, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը և ՌԴ Նիժեգորոդսկի մարզի նահանգապետ Վալերի Շանցևը մասնակցել են Նիժնի Նովգորոդ քաղաքի թիվ 18 արվեստի դպրոցը ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի անունով անվանակոչելու հանդիսավոր արարողությանը:

2015 թվականի հունիսի 11-12-ը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանն ընդունել է ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալության պատվիրակության անդամներին՝ Խոյի կուսակալ Հուսեյն Սեյվանիի ղեկավարությամբ: Պատվիրակության կազմում էր նաև Խոյի քաղաքապետ Մահբուբ Թիզփազը և այլք: ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը և ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալ Հոսեյն Սեյվանի Ասլը ս/թ հունիսի 11-ին ստորագրել են Հուշագիր երկու մարզերի միջև տնտեսական, մշակութային, մարզական համագործակցության ընդլայնման վերաբերյալ:

Հայաստանում Իսրայելի մշակույթի օրերի շրջանակում Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում կազմակերպվել է համերգ:

Ծրագրեր, մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարում, ՏԻՄ-երի և տարածքային ծառայությունների գործունեության համակարգում

Կազմվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման քառամյա(2015-2018թ.) ծրագիրը:

Մարզպետը մշտական ուշադրության կենտրոնում է պահել մարզային ենթակայությամբ կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների աշխատանքները՝ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Համակարգել է համայնքների աշխատակազմերի, համայնքային ենթակայությամբ կրթական, մարզական և մշակութային հաստատությունների գործունեությունը:

Կազմակերպվել է մարզի Վայք համայնքի ղեկավարի և Թառաթումբ համայնքի ավագանու արտահերթ ընտրությունները:

Համակարգվել է ՀՀ գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Բյուջետային հատկացումներ

2015 թվականի առաջին կիսամյակում մարզին 19 ծրագրերով պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է 1083730.3 հազար դրամ, որից 799770.0 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում:
Մշակույթի ոլորտին հատկացվել է 9241.3 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 1950.0 հազար դրամ:
Մարզի 44 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 102.1%-ով: ՀՀ 2015 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան եղել 460059.1 հազար դրամ, ֆինասավորվել է 100%-ով, աճը 2014 թվականի համեմատ կազմել է 11.2%:
ՀՀ Կառավարության որոշմամբ 2015 թվականին առաջին կիսամյակի ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար 50 տոկոսի չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: Ընդամենը փոխհատուցվել է 12647.9 հազ. Դրամ գումար:
Կրթություն
Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց՝ 15 հիմնական, 35 միջնակարգ, այդ թվում 2 վարժարան 3 ավագ դպրոց ՀՀԿԳ նախարարության ենթակայությամբ: Գործում է 1 ԲՈՒՀ և պետական տարածաշրջանային քոլեջը: Քաղաքային և գյուղական համայնքներում գործում է 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 858 երեխաներ,ինչպես նաև 24 նախակրթարան: Աշակերտների թիվը կազմում է 6683: Աշխատում են 1083 ուսուցիչներ: Մարզային ենթակայության 32 միջնակարգ դպրոցներն ունեցել են 436 շրջանավարտներ:
Առողջապահություն
-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 691 701.2 հազար դրամ: Մատուցվել է 18144.3 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ: Սոցիալական ոլորտի ձեռքբերումներից է նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքները: Աշխատանքներ են տարվում Եղեգնաձորի պոլիկլինիկայի շենքում հատկացված տարածքի վերանորոգման նպատակով նախատեսված նախագծման գործընթացի կազմակերպման ուղղությամբ:
-2015 թվականի ապրիլի 9-ին ,,ՓՈԽՀՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ,, է ստորագրվել ,,Էրեբունի,, բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի միջև՝ Վայոց ձորի բնակչությանը մատուցվող բուժօգնության և ծառայությունների որակի բարձրացման և մարզի բժշկական կազմակերպություններում չիրականացվող մասնագիտական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները հասանելի դարձնելու նպատակով:
Սոցիալական ապահովության բնագավառ
-Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության պահպանման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Արդյունքում Հանրապետությունում նպաստառու ընտանիքների միջին թիվը կազմել է 13.4%, իսկ մարզում 11.4%: Մարզում ամսական

նպաստ է ստանում 2072 ընտանիք, ամսական վճարվում է 57մլն դրամ նպաստ: Կենսաթոշակառուների թիվը 9919 է, ամսական վճարվում է 381 մլն դրամ կենսաթոշակ: Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում 2015թ. առաջին կիսամյակում գրանցվել է 1131 գործազուրկ, որից 147-ը տեղավորվել է աշխատանքի:

Ճանապարհաշինություն

-2015 թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել118.7կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքներ, իսկ 33.1 կմ ընթացիկ պահպանման աշխատանքներ:

-ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության ֆինանսավորմամբ վերանորոգվել է դեպի Ռինդ գյուղ տանող ճանապարհի մի հատվածը՝ 100 մլն դրամի չափով:

Քաղաքաշինություն

-2015թ-ի առաջին կիսամյակում կատարվել է 16440.0 հազ. դրամի շին.մոնտաժային աշխատանքներ: Ջրագիծը հանձնվել է շահագործման սահմանված ժամկետում: Գյուղական համայնքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով մարզի Մալիշկա, Գետափ, Արփի Զառիթափ և Փոռ համայնքներում իրականացվում է գազիֆիկացման աշխատանքներ 565,0 մլն. դրամի: Առաջին կիսամյակում իրականացվել է 169.0 մլն. դրամի շին մոնտաժային աշխատանքներ: Նշված աշխատանքների կատարման համար համայնքների կողմից կատարվել է համաֆինանսավորում 51.5 մլն. դրամի դիմաց 17.97 մլն. դրամ: ՎՋ բանկի միջոցների հաշվին կառուցվել է կեղտաջրերի մաքրման կայան Ջերմուկ քաղաքում, որի արժեքը կազմել է 653988.0 հազ. Դրամ:

Գյուղատնտեսություն

-Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2015 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է պարարտանյութ՝ ազոտական՝ 428 տ, ֆոսֆորական՝ 10.65տ, կալիումական՝ 10.75տ, իսկ դիզվառելանյութ՝ 31350լ: Տրամադրվել է գարնանացան գարու, առվույտի, եգիպտացորենի, կորնգանի սերմացու շուրջ 95.67տ ընդհանուր քաշով: 2015 թվականին նախորդ տարվա համեմատ 1021 հա-ով ավելացել են ցանքատարածությունները:

-„Հայկական միրգ„ ծրագրով 2015 թվականին մարզի համայնքներում հիմնվել են՝ Վերնաշենում՝ 4.02 հա կեռասենու, Խնձորուտում՝ 5.2 հա կեռասենու, Արինում՝ 17.2 հա ընկուզենու, Ազատեկում՝ 6.5հա բալենու, 2.7հա դեղձենու, 2.2 հա ընկուզենու 8.3 հա սալորենու այգիներ: Ընդհամենը հիմնվել է 46.12 հա պտղատու այգի:

-2015թ հունվարի 15-ից մինչև 2015թ ապրիլի 27-ը ACBA CREDIT AGRIKOLE բանկի կողմից մարզի 253 գյուղացիական տնտեսություններին է տրամադրվել 409080 դոլար գյուղնշանակության վարկեր՝ 14-24% տոկոսադրույքով և 3 տարի մարման ժամկետով, 336 գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորված վարկեր՝ 226մլն 200 հազար դրամ 14՝% տոկոսադրույքով և 2 տարի մարման ժամկետով: Կառավարության կողմից սուբսիդավորվում է վարկերի 6%-ը:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է՝ 22 578 գլուխ խոշոր եղջերավոր, 24 824 գլուխ մանր եղջերավոր անասուններ, խոզեր՝ 2048 գլուխ, թռչուններ՝ 139 439 թև և 21 855 փեթակ մեղվաընտանիք: Նախորդ տարվա համեմատ առկա է անասնագլխաքանակի աճ՝ խոշոր եղջրավոր անասուններ՝ 142 գլուխ, մանր եղջրավոր անասուններ՝ 1789 գլուխ: Գնդեվազ համայնքում կառուցվել է խոշոր եղջրավոր անասունների տոհմաբուծական ֆերմա, կաթի մթերման ու վերամշակման մեկ ձեռնարկություն, նախատեսված 350 գլուխ կաթնատու կովի և 150 գլուխ երինջի համար:

2015թվականին վերագործարկվել է Եղեգնաձորի պահածոների գործարանը: Մարզի 5 համայնքներում (Ռինդ, Աղնջաձոր, Վերնաշեն, Սարավան Զառիթափ) ,, Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության,, ծրագրով ստեղծվել են կոոպերատիվներ: Մարզում առկա 24 հացահատիկահավաք կոմբայներից 16-ը վերանորոգվել և աշխատանքային վիճակի է բերվել:

Նշենք, որ ս/թ մայիսի 15-ին կարկտահարության հետևանքով տուժել են Աղավնաձոր, Ռինդ և Չիվա համայնքների խաղողի ու պտղատու այգիները, ինչպես նաև հացահատիկի և բանջարային մշակաբույսերի սածիլված ցանքատարածությունները: Վնասը կազմում է 242.2 մլն.դրամ: Մթնոլորտային տեղումների տևական բացակայությունը հանգեցրել է երաշտի, որի պատճառով զգալիորեն տուժել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները:

Չնայած այս ամենին գյուղատնտեսական տարին նպաստավոր է և նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական մթերքների զգալի աճ կգրանցվի:

Արդյունաբերություն

2014թ.Վայոց ձորի մարզում, ըստ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով) թողարկվել է 15.1 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 15.3 մլրդ. դրամի արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 26 %: Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով: Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցել է թողարկվող արտադրանքի զովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

Մարզում գործարարության աշխուժացման նպատակով բազմակողման համագործակցության հուշագիր է ստորագրվել Իրանի իսլամական Հանրապետության ՈՒրմիա նահանգի, ՌԴ Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի, Բելոռուսիայի հանրապետության Մինսկի մարզի և ՀՀ Վայոց ձորի մարզի ղեկավարության միջև:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզում առկա են 300 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 44 համայնքներում: Վայոց ձորում կարելի է նշել զբոսաշրջության զարգացման հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ, անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

Ս/թ մայիսի 29-ին Զերմուկում բացվեց ,,Հայաթ,, հյուրանոցային ցանցի բրենդային առողջարան-հյուրանոցը, որը քաղաք ժամանած զբոսաշրջիկներին մատուցում է ինչպես հյուրանոցային, նմանապես առողջարանային ու բուժական բարձր կարգի ծառայություններ: 2014թվականի առաջին կիսամյակի համեմատ 2015 թվականի առաջին կիսամյակում մարզ ժամանած զբոսաշրջիկների թիվն ավելացել է 3000-ով կամ 20%-ով: